Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3714

1360 Լերմոնտով
Փախստականը
Բաքու - 1904

891.71
Լ-46

200 – 10/II 78

891.71-1
Լ-49

№ 16.

Մ. Ի. ԼԵՐՄՈՆՏՈՎ

ՓԱԽՍՏԱԿԱՆ

(Լեռնային լեգենդա)

Թարգ. Ե. Տ.-Գ.

Գինն է 2 կոպ.

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ"
1904

Մ. Ի. ԼԵՐՄՈՆՏՈՎ

891.71
Լ-46

ՓԱԽՍՏԱԿԱՆ

(Լեռնային լեգենդա)

Թարգ. Ց. Տ.-Դ.

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1904

2003 2011

Дозволено Цензурою. Тифлисъ, 24 Апрѣля 1904 г.

ՓԱԽՍՏԱԿԱՆ

21158-60

ՓԱԽՍՏԱԿԱՆ

(Լեռնային լեգենդա)

Փախչում էր Հարունն այծեամից արագ,
Արագ՝ ինչպէս որ արծւից նապաստակ.
Փախչում էր կռւի դաշտից սարսափած,
Ուր չէրքեզների արիւնն էր թափած։
Իր երկու եղբայրն և հայրը կռւում
Զոհ գնացին պատւին և ազատ կեանքին—
Նրանց գլխներն ընկած են թողում
Թշնամիների ոտների տակին։
Նրանց արիւնը պահանջում է վրէժ։
Սակայն Հարունը պարտքը մոռացաւ,

Ամէն բան կորցրեց այն տաք կռւի մէջ—
Սուր, հրացան, դաշոյն,—և արագ փախաւ։
Եւ օրն էլ մթնեց։ Մէգն օղակ-օղակ,
Ինչպէս լայնաթև մի սպիտակ պատառ,
Հերթով պատում է դաշտերը խաւար։
Արևելքից փչեց սառն եղանակ
Եւ մարգարէի անապատի վրա
Ոսկէ լուսինն էլ ծագում է ահա։
Այրող ծարաւից յոգնած և տանջւած,
Արիւն, քրտինքը երեսից սրբում,
Մերկ ժայռերի մէջ լուսնեակի դիմաց
Նա իւր հայրենի աուլն է տեսնում։
Շուրջը ամէն ինչ լուռ էր և հանգիստ.
Առանց տեսնւելու, գաղտնի մօտեցաւ.
Առողջ և անվնաս, սոսկալի կռւից
Միայն Հարունը տուն վերադարձաւ,
Եւ դէպի ծանօթ խրճիթը շտապեց։

Աղքատ տնակում դեռ ևս լոյս կար.
Տանտէրը տանն է. նա ամրապնդից
Սիրտը և ապա ներս գնաց դալկահար։
Սէլիմն և նա բարեկամ էին.
Բայց չը ճանաչեց ծերը եկւորին.
Ցաւից տանջւելով, մահճի վրա պառկած
Խեղճը մեռնում էր լուռ և մոռացւած։
—«Մեծ է Ալլահը. նա հրաման է տւել
Իւր հրեշտակներին քեզ մահից փրկել
Այլ փառքի համար. ասա, ինչ նոր բան.»—
Հանգչող աչքերը ուրախ բանալով
Ուժասպառ ծերը հարց տւեց նրան,
Եւ ոտքի ելաւ. յոյսի կրակով
Նրա խորշոմած երեսը փայլեց
Եւ մարտնչողի արիւնը կրկին
Եռաց և խաղաց իւր մահւան ժամին։
—«Մենք կռւում էինք երկու օր կրճում,

Իմ եղբայրներս և հայրս ընկան,
Եւ միմիայն ես խուլ անապատում
Թագ կացայ։ Ինչպէս հալածուած գազան,
Սուր-սուր քարերից, փշոտ թփերից
Արիւնաշաղախ, բոբիկ ոտներով,
Վարազների և գայլերի հետքից
Գնում էի անյայտ, նեղ շաւիղներով։
Կորան չէրքեզները։ Որ կողմն էլ նայես,
Մեր ոսոխներին կանգնած կը տեսնես.
Ապաստան տուր ինձ, իմ հին բարեկամ.
Ծառայութիւնդ—Մարգարէն վկայ,
Մինչև իմ մահը ես չեմ մոռանայ»։
Եւ մահամերձը տուեց պատասխան.
—«Գնա՛, արժանդ արհամարհանքի!,
Ո՛չ օրհնութիւն և ոչ ապաստան
Վախկոտի համար Սէլիմը չունի»։
Գաղտնի տանջանքով և ամօթով լի,

Հարունը լսեց առանց բարկութեան,
Այն նախատինքը. ապա վերստին
Անհամբոյր շէմքից դուրս եկաւ անձայն.
Եւ մօտենալով մի այլ խրճիթին
Մտախոհ և լուռ կանգնեց մի վայրկեան։
Թռուցիկ երազն անցած օրերի
Ինչպէս վառ կրակ մի ջերմ համբոյրի
Յանկարծ նրա սառն այտերը շոյեց.
Փայլեց, զուարթացաւ իր մռայլ հոգին.
Բոցավառ աչեր նրա առաջ կարծես
Գիշերուա մթնում անոյշ փայլեցին.
—«Նա սիրում է ինձ, Հարունը յիշեց,
Ինձնով է միայն շնչում և ապրում»։
Եւ ուզեց մտնել. բայց յանկարծ մի հին
Երգի հնչիւններ հասան ականջին։'
«Հանգիստ և խաղաղ
Լուսինն է լողում,

Ջինուորը մատաղ
Կուլի է գլխում։
Ջիգիթը շտապով
Լցնում է հրացան,
Կոյսը շոյելով
Ասում է նորան.
«Սիրելիս, վտանգ,
Յոյսդ դիր բաղդին,
Եւ աղօթք արա
Դու արևելքին։
Մի ուրանար
Մեծ Մարգարէին.
Մի մոռանար
Հասնել փառքին։
Արեան վրէժին
Թէ դաւաճանես՝
Վրէժդ չը հանած

Անփառք կը կորչես։
Անձրևները չեն սրբի
Քո վէրքերը,
Գազանները չեն թաղի
Քո ոսկրները։
Լեռներում չկա
Ո՛չ ոք, որ տանի
Այս նախատինքը,
Եւ կը դուրս անի
Վախկոտին — սարի
Զքնաղ աղջիկը»։
Գլուխը կախ գցած, Հարունն արագ
Շարունակում է իւր ճանապարհը.
Եւ մերթ աչքերից, կրծքի վրա, տաք-տաք
Թափւում են խոշոր արտասուքները։
Բայց ահա նաև փոթորկից թեքուած
Հարազատ տնակն է տեսնում դիմաց։

Նա սիրտ է առնում յուսով վերստին
Եւ պատուհանը բաղխում մեղմաբար։
Այնտեղ աղօթքներ, մաղթանք ջերմագին
Երկինք են ուղղում անշուշտ նրա համար։
Պառաւ մայրն է սպասում զաւակին,
Սպասում է կուսից.—«Մայրիկ, դուռը բաց,
Ես քո Հարունն եմ, քո կրտսեր որդին,
Որ խուսափելով սւինները ռուսաց
Եկել եմ քեզ մօտ...»

— Եւ մենա՞կ։

— Մենակ։

— Իսկ եղբայրնե՞րդ և հա՞յրդ։

— Ընկան.

Մարգարէն օրհնեց նրանց վախճանը
Եւ հրեշտակները նրանց հոգին տարան։
— Վրէժդ լուծեցի՞ր։
—«Ո՛չ, վրէժը չառա...

Այլ դէպի լեռներն թռա նետի պէս,
Օտարի երկրում թողի իմ սուրը,
Որպէս զի վշտերդ դէթ սփոփեմ ես
Եւ սրբեմ աչքիցդ արտասուքները»։
— Լռի՛ր, ո՛, լռի՛ր, գեաւուր խորամանկ,
Դու փառքով մեռնել չը կարողացար.
Ուրեմն, կորի՛ր, ապրի՛ր միայնակ.
Դո՛ւ, ազատութեա՛ն
Ստոր փախստական,
Ես քո ամօթով չեմ խաւարեցնի
Թող ծերութիւնս, տարիքս վերջին.
Դու ստրո՛ւկ ես, վախկո՛տ... բայց ոչ իմ որդին!»։
Լռեց մերժողի ձայնը. և շուտով
Ամէն ինչ քնեց ծանրաշունչ քնով։
Դառն անէծքներ, հառաչ, աղերսանք
Երկա՛ր լսում էր պատուհանի տակ.
Ապա դաշոյնի մի հարուած ուժգին

Վերջ տւեց Հարունի նախատինքին։
Վաղ առաւօտեան իւր մայրը տեսաւ,
Բայց դէմքը դարձրեց և մերժեց որդուն.
Եւ արդարներից արտաքսածի գլին
Ոչ ոք չը տարաւ գերեզմանատուն։
Նորա խոր վէրքից հոսող արիւնը
Ոռնալով լիզում էր բակի շունը,
Եւ երեխաներն ինքնասպանի գլին
Հայհոյում էին և ծաղրում էին։
Աւանդութիւնն ազատ լեռների
Պատմում է մահն և նախատինքը
Գծուծ, անպատիւ փախստականի։
Եւ մարգարէի աչքից նրա հոգին
Հեռացաւ ընդ միշտ անհաբեկ եղած,
Եւ մինչև այժմ իրանց՝ լեռներին
Նորա ուրւականը տալիս է այց։
Պատուհանի տակ, մինչև առաւօտ

Ծրչում է, բաղխում, հայհոյում երկչոտ.
Բայց երբ հասնում է նորա ականջին
Աղօթքի բարձր ձայներ Ղուրանից,
Փախչում է դարձեալ խաւարի մէջին —
Ինչպէս որ առաջ փախչում էր կուլից։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/31 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍ..ԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ՝

Անպոչ Հօրթը, պատմուածք Սանտերի Ինգմանի,
 թարգ. Յով. Ստեփանեանի . . . . 2կ.
Լուր-Դա-Լուր, քրդական պօէմա Վ. Փափազեանի 3կ.
Խաքիզներ, Մ. Մանուէլեանի . . . . 5կ.
Արաղայի դաշտում, պատմուածք Վ. Փափազեանի. 4կ.
Թռչող խողը, զրոյց Վ. Փափազեանի . . . . . 3կ.
Երեխաները, Ա. Ահարոնեանի . . . . 2կ.
Կուրութեան պատճառները, Բժ. Ք. Օհանեանի 3կ.
Բուղդա-լաւաշի զոհը, պատկ. Մ. Տէր-Դանիէլեանի 3կ.
Փախստական, լեռ. լեգենդա Մ. Լերմոնտովի,
 թարգ. Յ. Տ.-Գ. . . . . 2կ.

Գումարով գնողներին արւում է զեղչ։

Դիմել՝ Баку, Русскій Торгово-промыш. Банкъ
Іосифу Ярвелянъ.

3714

2013